

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

— 3*3 —

ՍՐԲԱԽԾՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵԿԵՂԵՑԵԱՅ

ԵՒ ԱՌԱՆՉԻՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷջ

(Տես յ՛էջ 201)



Յա երկար թուարկութիւնը, յորում մէ՝ համառոտախոս ըլլալու համար՝ շատ բան գուս ձգեցինք; և առաջ նորդէ ու կը տանի զիեզ առ պրատական մատենախօսութիւն մելքիտ եւ կեղեցոյ, յորում հաւանականարար արժան էր որ յիշատակուեին մասունք երկրորդ կրտու երկասիրութեան պարսիկ վկայասիրին, որոյ կորուսան իրաւամբ այնչափ ցաւակի էր յաշօ Ասսեմանեայ, ինչպէս տեսանք: Անշուշա շատ հետի կը մասնք վեշտասան հազար մարտիրոսաց վկայարանութենէն, որոց անուանք և գործք նահատակութեան, կը պահուէին՝ ըստ Ազումենեայ, Եղեսիոյ մատենադարանին մէջ: Ասկայն մեր զրած համառօտ ցուցակն ալ կրնայ գաղափար մը ընծայել մեզ մելքիտ յոյն ուղղափառ եկեղեցայն ունեցածին: Այսպիսի յիշատակարան մը կարևորութեան վրայ խօսիլը՝ տեղուսոյ չե: զայն միայն կը փափաքինք առաջ նկատել՝ թէ իր հաւատոց օրերուն և ի յարատեւակ միտթեան ընդ կեղունի ուղղութեան հաւատոց, մելքիտ եկեղեցին առատարար ընդուներ է զաւանդութիւն և զաւրբ՝ ոչ միայն յունական՝ այլ և արևելեան եկեղեցոյ:

Այսափ կորուսաներէն ետքը՝ սփոփիչ է արդար տեսնելը, թէ նախախնամական այցելութիւն մը՝ պահպաներ է նոյն խի սրբոց ձեռքով և մինչև առ մեզ հասացեր իրենց տարեգրը, որ նոխարար առատութեամբ կը ներկայան մեզ ի թրիտանական մուսէնի. ուր ամփոփուած կը պահուէին՝ ոչ նուազա-

գոյն թուով, սրբազան գրոց մեկնութեան և հայրագիտութեան պատշաճող նաև պատուական ուրիշ երկասիրութիւնք: Թրիտանական հիւրասիրութիւն՝ մասնաւօր արտանութեամբ մը կարծեսիթէ. սրբոց նահատակութեան գործերն հաւաքելու պատույն արժանացած է իր մատենադարանին մէջ, և սրբակը քանակիրաց համար մեծ գոհութիւն է նկատելը՝ որ լաւ պահպանութեան յանձնուած են: Նյոնպիսի և նյոնչափ առատութեամբ չեն գոտնուիր ոչ ի վատիկան, ուր Ասսեմանի գրապետին վրկայութեամբն խի նուազ և ասկաւաւոր են թուով սրբախօսական յիշատակարանք, և ոչ գարձեալ յազգային մեծ մատենադարանի սատանին Գաղղիոյ: Այս վերջինին անեցած շոր հարիբ կամ քիչ աւելի թուով ասորի զրազրաց մէջ, որոց ցուցակը քիչ ասարի յառաջ հրատարակեց Զօթէմբէրգ, հազիւ մի քանի տօնացաց կամ կազանդացաց կը նըշանակին, և շոր կամ հինգ վկայարանութեանց սրբոց մատենանք: յորոց հնապայնն՝ 1282 թուականն կը կրէ, որ մելքիտ եկեղեցույն հնութեանը նկատմամբ՝ խիստ նոր պէտք է համարուի. թէպէս և պարունակութեամբն հետապնդական է, և ուր հնապայն աղբերը կ'ակնարկուին, յորոց քաղուած են:

Հոն կը նկատուին, օրինակ իմն, կրին վարք սրբոյն Ալեքսիանոսի, յորոց ի միումն երանելոյն մահը կը պասմաւի հանդիպած ըլլալ յեկեսիրա, և ի միումն ի Հռովմուոր յօժարակամ կը պանդիստի աղքատ և անծանօթ, ի տուն ծնողացն՝ ըստ ծանօթ

պատմութեան իր վարուցը : — Դիռնեսփոսի արխապագացոյ թուղր առ ջիւռու , որ մեր և որիշ արեւելեան մասենազբութեանց մէջ ալ կը գտնուի , և շրջագայական նամակ մ'է սրբոց առաքելոցն Պետրոսի և Պավոսի վը-կայութեան վրայ , և կը կարծենք թէ կը պակսի առ արեւելեայս . որպինեաւ ոչ Բոլ-լանգեանց յիշատակութիւնը կ'ընեն , և ոչ իր անտամը հրատարակուած հասորոց մէջ կը գտնուի , գէթ մեր տեղեկութեանը հա-մեմատ , և յարեւելեայց առողով՝ թարգմա-նած և հրատարակած է հայոգէտ Մարտին քահանայն ի Փարիս : — Կան նաև ուրիշ վարք և վկայաբանութիւնք՝ որոց համանանց կը գտնուին նաև առ մերսն , և կամ մեզի համար հնտաքննականը կը լուսն համարուիլ . ինչպէս Վարդ Ծովհաննու կարձիկ , Զոսի-մայ արրայի , Եփրեմի , Սրբոյն Յակովրայ՝ Արքայ (կաղ) կոչեցելոյ : — Այս ակնար-կութենէն ալ կ'իմացաւի թէ ո՛րշափ աղքատ է ոյն նկատմամբ Գուղղիոյ ոզգային մատե-նադարանը , համեմատելով բրիտանականին ճո-խութեան կետ , թայց պէտք է յիշել և զայն՝ զի գովելի նախանձաւորութեամբ , մատենա-գրութեան համար աղէտայի սեպաւած մամա-նակաց մէջ անզամ , ետևէ եղած է զանձել թոշէտ . Հերիկուրի ճափ հաւաքմունքն զըր-շագրաց՝ զօր բերեր էր յեթովլիկի : Տարա-կոյս չկայ որ այս սասացումը անբաւական վաստեցաւ յընծայել բանասիրաց զմիջոց կարեսոր լուսաբանելոյ եթովպական եկեղեց-ւոյ Մարտիրոզով զըրերը , որոյ կազանդացու-ցին մէջ՝ հրատարակելոյ ի Լուղորդէ , շատ ու շատ մեղ անձանօթ սրբոց անսամբ կը գտնուին . և Բօլլանդեանց ալ կարելի շեղա-սպասէլ՝ յեւլով զայնսոսիկ իրենց բազմանմուտ երկասիրութեան մէջ : Տօնական զրոց երկ-հատոր զրչագիր մը միայն կը զանուի՛ եթով-լուպականաց լասակարգին մէջ . յորում հաւա-քուած են զփտի եկեղեցելոյն սրբոց վարքե-րը . և որպէս հեղինակ կը ճանչցուին յանուանէ Միհայէլ և Յօվհաննէս զփտի եպիփուա-ռունք : Ակզրնազիրն արաբերէն կը թուի . յօրմէ ամսարիկ յեղուի թարգմանուած , և եր-կուսաներորդ զարու գրչութիւն է :

Ամեմական բանասէրը կը թուին հանուա-

տել՝ թէ քրիստոնէական կրօնից ի թերայիդ երկցուցած որտաշարժ յիշատակարանց , գեռ-եւս պէտք եղածին շափ ծանօթացած շնն ի-րենց մէջ , և թէ անսնց ընտրելազոյն էջեղը թաղուած կը մասն անյցելու զփտի զրչա-գրաց մէջ , որ զիբէթէ ժամանակակիցը են այն անապատաւորաց՝ որոց կենազրութիւնը կ'ը-նեն և առացինութիւնը կը դրուածն : Զոյէ-կտ , յօրմէ յօրինուած Հոռիլիայ բորգեան , մատենազարանի զըրագրաց ցանկին մէջ , շատ հետաքննական՝ բայց տակաւին արժանապէս չինտազուուած ժողովածոյր կան , երբեմն մեծ և ընկարձակ հասուածներ մէջ բերուած են , և մերթ ալ ամբողջ վկայաբանութիւնց , ինչ-պէս Սրբոյն Պետրոսի Պղեճսանդրիոյ՝ իր յաջորդէն զրուած , ի Սրբոյն Ազերաննպէ . Սրբոյն Պիկենատիոսի , ի Մովլիսէ յիւր յա-չորդէ՝ յեպիօկոպսական աթուն կեփտի , և որոց շատերու անուանց բոլորովին անձանօթ են ի մեր վկայագրական մատենազրութեան , անոնց վարոց և յիշատակութեան հանդիպած շրջալով ի մեր զիրս , ինչպէս նաև արաբացի շեղուով զրուածներուն , որոց բազմաթիւ հա-ւաքմանք կը գտնուին ի մատենազարան ա-րևմտից , և մանաւանդ ի Վատիկանեանն , ո-րոց վրայ այլ և այլ հետացննական տեղե-կամթիւններ աւանդած է ծիրանաւորն Մայ , յԱսեմաննեայ թողուած ծանօթութեանց ա-ռաջնորդութեամբ . ի Լէյզա , որ Հզանգիոյ ամենաբարդաւած սրբանն եղած է արեւելեան ուսումնասիրութեանց , նոյնպէս պարիսեան հաւաքմունք՝ զօր ցանկեր է համբաւանուն արեւելեազէտն Դրսասի և իր հմաւա աշա-կերտք : Ազգային մատենազարանին արա-բական զրչագրաց մէջ նշանաւոր է ժողովա-ծոյ մատենան մը . յօրում ի մի ամփոփուած են պրակը և վկայաբանութիւնը առաքելոց՝ աւետարանաց և աշակերտաց Քրիստոսի , վկայութիւնը մարտիրոսաց որ յաւուր հա-լամանաց Դիոկլետիանոսի , և հաւաքում մը երկու հարիկ յիսուն ճառից և վարոց Սրբոց վասն զրծածութեան Ղփտեաց : Թերպայիկաց քառասուն անապատաւորաց վարուց զիրք մը , և Վարք Հարանց կոչուած զրուած մը , նման մեր , Յունաց և Լատինաց քով եղած համ-անուն երկասիրութեան . արաբական թարգ-

մանութիւն մը Գրիգորի առաջնոյ քահանայասպետի Տրամախօսութեանց, յեօթներորդ գարու կատարուած, ժամանակակից Սպիրոնիսի երուաղեմացոյ յունական թարգմանութեան :

Գ

Մեծ և անգնահատելի է արզարե հայ, ասորի, զփտի, եթովպացի և արաբ հին եկեղեցեաց արդէն մատուցած և զեռ եւս մատուցանելի ծառայութիւնը պրախօս վկայացրութեանց նկատմամբ. և արևմանեայք՝ որոնք որ այդ ուսումնասիրութեամբ կը պարապին՝ այնչափ աւելի պիտի օգտափին և ըմբռնեն անոր կարևորութիւնը որչափ աւելի լըշարար և զիմնարար հետազօտեն այդ յիշեալ ազգաց մատենազրութիւններն և լիզուն, բաւն իրենց աղրերացը պատուական ջներէն յազեցընելով իրենց ծարաւը : Նախկին թոյլանգեանք որ այնչափ արգիւնաւոր են Արքոց վարուց մրաց հրատարակած բազմաթիւ և ամենահմուտ հատորներով զոր ընծայեցին եկեղեցւոյ և եկեղեցական ուսմանց, շոգեցին կամ շկրցան ըմբռնել այդ կարեւորութիւնը՝ զոր այսօր իմաստունն Երբուա լաւ կը ճանչնայ, և նոյն իսկ իրենց արժանաւոր յաջորդներն՝ մինչ ժամանակաց հանգամանքէն և Յիսուսեան ուխամին դէմ ելած՝ հալածանցներէն՝ ականայ անկատար թօղուած ընդարձակ գործոյն շարունակաթիւնն կ'ընեն այժմ ի թելլիքա : Շատ ու շատ մնացամ փափաք յայտնուած է այդ վասատակաէր գործիչներէն և առաջարկութիւնը՝ այդ նկատմամբ կարևոր եղած ձեռնաւութիւնն, աջակցութիւնն և լոյս ընդունելու յարելիքան ազգաց՝ որոց լիզուի և մատենազրութեան վեռ անծանօթ կամ ըստ արժանայն տեղեակ չեն. և երբ ո՞ր և իցէ նուէր մը եղեր է իրենց, թէպէս փոքր թէպէտ անշշան, այնչափ աւելի մեծ եղեր է և ազնիւ շնորհապարտ ընդունելութիւնն :

Անցնիք հիմա Յունաց :

Երեք երեւոյթ (phase) ունեցած է յօյն սրբախօս մատենազրութիւնն, և որ հետեւանց կամ արդասիք կրնան սեպուիլ իր եկեղեցւոյն ունեցած այլառոյ վիճակաց + Ուշելով պարագայից համեմատ բահնել, առաջինը

նօտարական կրնանց կոչել, միւսը ներդողարանից, երրորդը՝ փոխարերդողաց, կամ իրենց բառով մետափրաստեանց (թարգմանչաց) : Համառօտ ակնարկ մ'ալ ձգել ուզած տաեննիս այս երեք շրջանաց վրայ, շատ անգամ յարեւելից յարեւմատ պիտի տափառէնք փոխաղբուիլ, որչափ ալ զիտում շոնենանք համառօտ տեսութեանս մէջ և առ այժմ անով զրաղիլ :

Մեր նպատակին գուրո չէ յիշատակել թէ նմանօրինակ աւանդութիւն մը՝ յոյն եկեղեցւոյ մէջ հաշակաւոր երփու անձանց, իսաբրի և կոստանդինանոսի, որ ետեւէ եղան ի մի հաւաքել Արքոց նահատակութեան արիական հանդիսից պատմութիւնը, ոչ նուազ փայլի. կը յիշուի նաև արեւմտեան եկեղեցւոյ պատմութեան մէջ : Հանդիսական գումարման մը կամ ժաղովոյ ատեն՝ սուրբ քահանայապետն Ամերգեստրո, տուշի կոստանդինանոսի ինքնակայի և եկեղեցւոյ մեծանուն և բազմարդին հայրապետաց, կը ներկայացընէ եօթնեւտասն հոռմէտէական հօտարաց խումբ մը՝ որոց մատնաւոր կերպավ յանձնուած էր Արքոց վկայարանաւութիւններն հաւաքելու գործը կամ պաշտօնը : Որչափ ալ պատմական քննազառատութեան աշբին զժուարին երենայ նման վէպիք կրկներեւոյթ մը, մի և նոյն վախճանառ և զիտամամբ, և երկու զէպքն ալ հաւատար սույդ ենթազրել, բայց այս ինչ անտարակուալի է, որ հալածանց զարերէն ետքը երբ եկեղեցին իր ասաւուածապարգի խոզաւաթիւնը գոտու, պաշտօնական և ընդհանուր քննութիւնն մը եղաւ առ ի հաւաքել զվկայաբանութիւնն մարտիրոսաց և վկայից հաւատույս : Ի զավմ կը պահուէին ինամենավ և զդուզութեամբ այդ Մարտիրողով մատենաց, և ինչպէս ի նախընթաց գարու, ասանկ ալ եաբը, քրիտունեայ աշխարհին ամեն կօզմերէն պիտի զային ի խնդիր այդ պատուական մատենից :

Կատանանդինանոսի գարձի թոյլ տրուեցան մուտք հասարակաց զիւնաց, համելով զգազափարս հիւպատոսական կամ բախչիսից արձանազրութեանց և աօմարաց, որոց ամեն մէկ էջը ներկուած էր բոսրափայլ արեւամբ վկայից : Զարմանալ պէտք չէ արդարե ոք A.R.A.R. @

այս պաշտօնական աղբիւրէն քաղուած բաղմաթիւ գրութիւններէ մեզի հասածն այդշափ սակաւաթիւ է : Ալանց կարու ըլլալու յիշել հետեւալ եօթնատասն երկար գործ, որոնք անթիւ քրիստոսական յիշատակարաններ անհետ ըրին, երկու զիտողութիւնը միայն բաւական են, ի տալ զրացարութիւն այս երեւութիւն : Տասը տարուան մէջ, որ հովամէական կայսերաց յարուցած վերջի հալածանաց տերուութեան ժամանակն է, հոգեվարքի մէջ եղող հեթանոս կրօնից ամեն ջանքն եղաւ նախընթաց հալածանաց տարեցիցն անհետ ընել վերցընել մէջտեղէն . և այս յիշեալ տասը տարուան միջոցին մէջ այնշափ բռուն և շարունակեալ էր կոտորածն, մինչեւ ամբողջ քաղաքներ ամերել, քանամել, հրայրեաց ընել, և անոնց բրոզը բնակիւթը սրէ անցընելով արեան գետեր վազցընելու ուստի ոչ կրնային և ոչ կ'ուզէին հապատակիլ այն ամեն ձեւակերպաւթեանց՝ զոր նախին հուսլմէական օրէնքէտը սահնաներ էին կատարումը պահնանջելով :

Բժմշկական զօրծերուն տեղ կրնային ըըռնել նատարաց արձանազիքը, որոնք թէսէտ երկրորդական ձեռաց արտադրութիւնը կրնային համարուիլ . բայց վակերական յիշատակարանաց համաճայնք էին, ինամօք և զզաւութեամբ պահնելով նախնական նիւթին ու ձեւը, միայն տեղ տեղ և երեւմն աւելցընելով նախարանութիւն մը, ընծայական մը, թաւականաց համաժամանակութիւն (synecopisime), համառու յաւելուներ Սրբոց մահը կամ թաղումը պատմելով, ի պատիւ իրենց կառուցուած եկեղեցեաց հիմնարկէից ծանօթութիւն ու նշխարաց փոխազրութեան և հրաշից . մերթ ալ իրենց յիշատակին նուրիուած ներբող մը աւելցընելով, զօր ապա ի լուր հաւատացեալ ժաղարդիւան սալոր էին ընթեռնուշ յեկեղեցւով . և յատենի :

Այս ամեն ըստածներնէս քաջայայտ կ'երեւի որ Սրբոց վարուց նախնական խմբագրութիւն՝ կանոնականութեան ամեն պայմաններն ունէր, պաշտօնական ու հանդիսաւոր վակերականութեան ու վերաբննաւթեան, ուստագավէս որբախօսական քննադասաւթեան ամեն կարեւոր հանգամանօքն, եպիսկոպոսա-

կան բարձր և օրինաւոր իշխանութեան ենթարկուած, հաւատացելոց բարեպաշտութեամբ ինաւանով պահպանուած, և կոնսական փառաւորութեամբ, մեծարուած : Ուրիշաւագունք և կէս սարկաւագքը, որ մարտիրոսաց զարերուն կ'ուզգէին և կը լրացնէին զգործաց գլազիր նոտարաց, զեռ եւո կը շարունակէին կատարել զնոյն զոր և զպաշտօն, նախագահներով ընթերցմանց և կարգաւորելով զարարդականն հանգստից (station) և սաղմոներգութեանց : Այս էր՝ մինչ ի կէս միջին զարուց՝ սարկաւագպետին պաշտօնն յեկեղեցւով : Կը յիշուին անուանի սարկաւագունք ի Հռովմ, նոտարց և զրագետը քահնանյապետաց, որոց յանձնուած էր պահպանութիւն կամ նախագահութիւն Սրբոց վարուց դիւնաց :

Ինչ որ յարևմտեան եկեղեցւով սարկաւագպետին զործն էր, զնոյն առ Յոյնս կը կատարէր սինկեղզսն (կամ *scallarius*), թէ զիստութեամբն և թէ աստիճանաւ նշանաւոր անձ, մը, որ խստիւ և մանր կը ցննէր և կը կոչէր ուղղութեան բնագրաց, որ յամբոնէ պիտի կարգացուին ի լուր հաւատացելոց և ժամանակաւորաց : Գեղագրաց անզամը այսպիսի գրութեանց մասնաւոր զպրոց կար, որ իր գասական աւանդութիւններն ունէր . և իրենց այժմասութիւններն աչքէ կ'անցընէր քննիչ (օլորօածէ) կոչուածն . կը սըրբագետը բնագիրն՝ ուր որ հարկ տեսնէր, վերնազիքըն կամ խորագրերը կը դնէր, զըլովներն կը բաժնէր, և ըստանցքին վրայ կ'անցընէր կաղանդացուցէն նշանակուած սկըզբնատաերը : Այսպիսից են սակաւագիւտ և ամենազարդ զզագիրք՝ ծիրաներգյան երեսի վրայ, ոսկի կամ արծաթի տապից և ընսիր մազաղաթի վրայ զրուած, ճնու մուսէսններու զարդ և զեղեցկութիւնը : Անզին համարուած էին ի Հռովմ յաւերանեան մասենազարանի մէջ պահուածներն :

Ցամրիսնէ եկեղեցեաց տարուէ տարի հրատարակուած և ի լուր հասաւացելոց կարգացուած մարտիրոսաց վկայարանութիւննէ մասնաւոր արծէր և կարեւութիւն ունենին շարուրդ և հինգերորդ զարուց մէջ՝ վասն զի այն միջոցին էր յորման եկեղեցական կարգաւորութիւնը և սահնանք մասնաւոր և որո-

շեալ ձեւ մը և հաստատութիւն կ'առնուին :
Փոխ առ փոխ սաղմնութիւնք և եօթն
ժամը օր ըստ օրեայ կանոնական մաղթա-
նաց, ի միայնանոցաց կ'անցնէին ի մայր
եկեղեցիս Անախորայ, Աղեքասանդրիս և կոս-
տանդնուպոլի, տպա ի Մեղիոլան՝ Սրբոյն
Ամբրոսի ձեռքով, և յետոյ ի Հռովմ՝

Դամասոս քահանայապետին օրովը, որ Հռով-
մայ և արեւմտեան քրիստոնէութեան համար
եղաւ ինչ որ էին արևելքի համար Աթանաս,
Բասիլիոս և Ասկերոս, օրէնազիրց եկե-
ղեցական կարգաց և պաշտամանց. և ինչ որ
մերքն Անակ և Մեսորովք ի Հայաստան
եկեղեցով ի նմին դարս :

Շարայարելի

Ի ՏՕՆԻ

ԱՄԵՆ ԱՍ ՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ

—♦♦♦—

Շարականիս սկզբնաւուսերէն յայտնի է
թէ Յովհաննոս արքայի խնդրանոր և դրաս .
Յովհաննոս արքայն ժանօն և ազգային բա-
նափրաց. իսկ շարականիս գրողն անձա-
նօր է, վասի զի մինք գրչացրաց մէջ ևս
գրողին անունը կը պահանջ, թէպէտ դրա-
րեան ուժը և ժամանակը յայտնի կ'ընեն
զինքը :

ՕՐ ՀՆՈՒԹԻՒՆ ԴԻ

Յերիս անձինս բաժանեալ և մի բնաւ-
թիւն ոչ պատեալ. Երրորդութիւն պաշտելի,
Հայոր և Արդի և Սուրբ Հոգի. Երբեակ և մի
աստուածութիւն բոլոր սրբաց օրհներգութիւն :

Որ Հայոր առարօն յայտնեալ, ի մարգա-
րէս քարոզեալ. Որդիկ եկեալ մարմացար,
անորէնութեամբ ծանուցար. ի զերնա-
տունն իշեալ Ռզիկ, և կնքեցեր զթիւ Եր-
բակից :

Հայոր զքեզ սաեղծիչ յայտնելով, հաստիչ
Բանիկ և Ուգով. Որդիկ Հայոր քարոզեալ և
զիզին սուրբ խոստացեալ. հաստատեցեր Ռ-
զիկ իշեալ զերրորդութիւնն կատարեալ :

Այսօր մարզիկ սրբարաննեն զքեզ, զօր
պրովէք գերերգին. Երիցց. Երբեակ սուրբ և
մի անք, զքեզ եռանձնեայ մի բնութիւն :

Նորոց սրբոց Ամբանաման հոգաց խուզ. Ե-

կեղեցոյ, զերիս անձինս ընդունելով, մի տէր
ձայնէ հաւատով :

Նախնեաց երից նահապետացն, երիցս Աս-
տուած կոչեցար զերբեակ անձինս որդոց նա-
ցին ցուցեր, զոր ազգեալ նախկին :

Երրորդական լոյսոց անսկզբանական երրեակ
լուսով լցեր զաշխարհու ամենայն, զօր ի
սկզբանն երից աւուրցն աննիթ լուսավ ցու-
ցեր զիսաւարն անզնորց զկուսան հերքեցեր :

Սկզբան էից երիս ցուցար գործակից .
Հայոր յայտնեալ Աստուած առնօդ երկնի և
երկրի. ասաց Աստուած զբանդ և զիրովի. և
ի վրայ ջարց ցջեալ սուրբ զլոդի:

Որ արացաւք ձայնի յոյնական՝ յառներ
մարզոցն ցուցեր զանձինս երրական, ի նմին
պատկեր զբնութիւնոց յայտնեալ միական,
նոյն պատկերակից և միշտ գործակից :

Բամեալ ընդ զօրս երկնաւորաց բնակիչը,
երկրի ի յնուոյդ շնորհաց. Երրորդութեանոց
երկրպագելով, միայն Աստուած զաւանելով
Հայոր և զիրովի, սրբովդ Ռզով. ամենայն
սրբաց հայցմամբ խնայեա ի մեզ սուրբ Եր-
րորդական :

Երրորդական մի տէրութիւն միասնական
սուրբ Երրորդութիւն. յերիս անձինս և մի
բնութիւն. յերիս զէմն մի աստուածութիւն. մի
կամք և մի ներգործութիւն անսկիզբն անմահ
մի փառակցութիւն. ամենայն սրբոց և այլն :

Թափանապէս գունդքն լրման, բոլոր սրբաց